

ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Երկուշաբթի 01 Մարտ 2021 - ԹԻՆ 29

Հրատարակչուհին՝

Արեմտեան Հայաստանի
Հաղորդակցութեան Նախարարուհին

Հետադարձ կապ
contact@western-armenia.eu

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին էջ	1
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն	2
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն	4
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարան)	6
Կրթութիւն եւ գիտութիւն - Սպորտ	8
Վերջին էջ	9



ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Երկուշաբթի 01 Մարտ 2021- Թիվ 29

Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան 10-րդ ամեակի կատարուած աշխատանքի ամփոփում

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարան) կը նդունէ «Արցախի ինքնավարութիւնը ճանաչելու մասին» օրէնքը

Այսօր Հայկական Լեզիոնի 102-րդ տարելիցն է



Հայկական լեզիոնը կազմաւորուեր է 1916 թուականին՝ Ֆրանսիայի բանակի կազմին մէջ՝ Անտանտի երկիրներու ներկայացուցիչներ Մարկ Սայքսի, Ժորժ Պիկոյի եւ Հայ ազգային պատուիրակութեան նախագահ Պողոս Նուպարի միջեւ Լոնտոնի մէջ կնքուած համաձայնագրի հիման վրայ:

Յետագային Պողոս Նուպար փաշայի բանակցութիւնները Ֆրանսիայի քաղաքական եւ ռազմական իշխանութիւններու հետ աւարտուեցաւ Հայկական լեզիոնի ստեղծման մասին պայմանաւորուածութեան ձեռք բերմամբ, իսկ ապա՝ Լեզիոնի ստեղծմամբ: Հայկական լեզիոնի ստեղծուելու նպատակն է թոյլ տալ հայերուն՝ մասնակցելու Օսմանեան կայսրութեան մէջ մտնող Կիլիկիա երկրամասի ազատագրմանը եւ օգնել հայերուն՝ իրականացնելու այդ երկրամասին մէջ իրենց ազգային պետութիւն ստեղծելու ձգտումները: Հայկական լեզիոնը պետք է մարտնչեր միայն թուրքերու դէմ եւ միայն Կիլիկիայի մէջ: Այն պետք է դառնար ստեղծուելիք ապագայ Հայկական բանակի կորիզը:

ԱՀՀ նախագահ Արմենակ Աբրահամեանը յիշատակելով հայկական լեզիոնի ստեղծման օրը, նշեց որ հայկական լեզիոնը հարուած էր թրքութեանը՝ ուժգին ու դիպուկ հարուած: Լեզիոնը կոչուած էր ապագայ Արեւմտեան Հայաստանի զինուած ուժերու կորիզը ըլլալուն:

Լեզիոնի ստեղծումը թոյլ տուաւ արեւմտահայութեանը դուրս գալ յուսահատ ու դատապարտուած ինքնապաշտպանուողի դերէն, փոխարեն զէնքի ուժով կարողանալով ցեղասպան պետութիւնէն անջատել իր հայրենիքի բաւական ընդարձակ տարածք մը, իսկ ետքը ապահովել այդ շրջանի ժողովուրդի նահանջը:

Հայկական լեզիոնը իւրահատաուկ կամուրջ դարձաւ հազարամեայ հայկական մարտական ոգիի համար, որը իր ծիլերը տուաւ տասնամեակներ ետք ԱՍԱԼԱՅ-ի եւ Արցախեան առաջին պատերազմի կամաւորականներու զինուած պայքարին:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովը (Խորհրդարան) կը նդունէ «Արցախի ինքնավարութիւնը ճանաչելու մասին» օրէնքը



Չորեքշաբթի, 2021 թ. Փետրուարի 24-ին, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովը (խորհրդարանը), ուսումնասիրելով առաջարկուող երեք փոփոխութիւնները, միաձայն քուէարկեց հասած մէկ ձայն՝ Արեւմտեան Հայաստանի պետութեան կազմին Արցախի ինքնավարութեան օգտին:

Այս օրինագիծը ներկայացուեր է 2021թ. Փետրուարի 03-ին՝ Արեւմտեան Հայաստանի կառավարութեան կողմէ 2020թ. Դեկտեմբերի 01-ին Արցախի Կառավարութեան փաստացի ճանաչումէն ետք:

Այս օրէնքի առաջարկը, երբ վավերացուի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի կողմէ, կը ներկայացուի Սահմանադրական խորհուրդ՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային Սահմանադրութեան մէջ ընդգրկելու համար:

Պատգամաւորներու եւ Կառավարութեան միջեւ երեք շաբաթ քննարկման առարկայ էին պատգամաւորներ Սամ Թիլբեանի, Գիլերմո Կարամանեանի (իրավաբան) եւ Հակոբ Հակոբեանի կողմէ ներկայացուած եւ պաշտպանուած առաջարկուող փոփոխութիւնները:

Հաշուի առնելով խորհրդարանական բանավեճի եզրակացութիւնները, ստորեւ ներկայացուած օրինագիծը միաձայն՝ բացի մէկ ձայն, ընդունուեցաւ ներկայ պատգամաւորներու կողմէ :

Հիմնուելով Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան ազգային սահմանադրութեան 76-րդ Յոդուածի վրայ՝ Հանրապետութեան Նախագահը 21 օր ունի ստորագրելու եւ հրապարակելու Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (խորհրդարանի) կողմէ ընդունուած օրէնքը:

2021թ. Փետրուարի 25-ին՝ Զօրավար Անդրանիկ Օզանեանի ծննդեան օրը, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը ստորագրեց եւ հրապարակեց սոյն օրէնքը, որը կը ներկայացուի Սահմանադրական խորհուրդին:

Հաշուի առնելով հետեւեալ դրոյթները (սկզբունքները).

ա) Միաւորուած Ազգերու Կազմակերպութեան Կանոնադրութեան 1-ին եւ 55-րդ Յոդուածները:

բ) Բնիկ ժողովուրդներու իրավունքներու հռչակագիր:

գ) Արեւմտեան Հայաստանի հայերու իրավունքները (հռչակագիրներ):

դ) Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը:

Եւ, հաշուի առնելով Արցախի առանձնահատուկ փաստական եւ իրավական դիրքը 2011 թ. Փետրուարի 4-ի դրութեամբ՝ Արեւմտեան Հայաստանի կառավարութեան կազմաւորման պահին, եւ ներկայիս, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովն կը նդունէ օրէնսդրական հետեւեալ սկզբերը.

Յոդուած 1. – Արցախի տարածքը Արեւմտեան Հայաստանի (Հայաստանի) տարածքի բաղկացուցիչ մասն է, համաձայն 1920 թ. Յունուարի 19-ին փաստացի ճանաչուած Հայաստան պետութեան, իսկ 1920 թ. Մայիսի 11-ին դէ յուրե՛ ճանաչուած Հայաստան պետութեան:

Յոդուած 2. – Արցախի հայ ժողովուրդը Արեւմտեան Հայաստանի բնիկ հայ ժողովուրդի անբաժանելի բաղադրիչն է՝ ուստի իրավունք ունի դիմել Արեւմտեան Հայաստանի քաղաքացիութիւն ստանալու համար:

Յոդուած 3. - Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը փաստացի կը ճանչնայ Արցախի հայ ժողովուրդի կառավարութիւնը որպէս ինքնորոշման իրավունքի իրացման արդիւնք.

Յոդուած 4. – Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը կը ճանչնայ Արցախի հայ ժողովուրդի կողմէ իր ինքնորոշման իրավունքով հռչակած Արցախի ինքնավարութիւնը՝ յարգելով Արեւմտեան Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը 1920 թուականէն ի վեր:

Յոդուած 5. – Սոյն օրէնքը վավերացնելէ ետք կը ներառուի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան մէջ:

Յոդուած 6. – Վավերացուելէ ետք սոյն օրէնքը կը հրապարակուի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Պաշտօնական տեղեկագիրին մէջ:

Նախագահը, կառավարութեան անդամները եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (խորհրդարանի) պատգամաւորները սոյն օրէնքի ընդունելը համարեցին պատմական փաստ Արցախի համար:

Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան 10-րդ ամեակի կատարուած աշխատանքի ամփոփում



Western Armenia (Presidency, Government, Parliament)

Déclaration consignée dans tous les instruments de ratification déposée à partir du 09 mai 2016 (Constitution Nationale de la République d'Arménie Occidentale)

La République d'Arménie Occidentale se dit prête à ratifier toutes Conventions et tous Protocoles additionnels conséquents, elle déclare cependant qu'elle n'est pas en mesure de garantir l'application des dispositions des Conventions et Protocoles conséquents dans ses territoires occupés par la République de Turquie, jusqu'à la libération de ses territoires de l'occupation et l'élimination complètes des conséquences de cette occupation.

La République d'Arménie Occidentale reconnue par Décret russe le 29 décembre 1917, puis *de facto* le 19 janvier 1920 (début des annuités, le 1^{er} mars 1920) et *de jure* le 11 mai 1920 par le Conseil Suprême des Puissances Alliées et Associées, pourtant reconnue par la Turquie le 10 août 1920 (Traité de Sévres) avec une frontière officielle décidée par la Sentence arbitrale du Président Woodrow Wilson le 22 novembre 1920, déclare que, jusqu'à la libération de l'occupation et l'élimination complète des conséquences de cette occupation, ainsi que le règlement des réparations conséquentes au génocide perpétré sur son territoire et de cette occupation depuis le 18 décembre 1917, la République d'Arménie Occidentale ne coopérera pas avec la République de Turquie dans le cadre des Conventions et Protocoles correspondants. (La carte officielle du territoire de l'Arménie Occidentale est disponible [ici](#)).

RESULTS OF THE GENOCIDE OF THE ARMENIAN PEOPLE

Ministry of Justice and Consequences of Genocide of the Republic of Western Armenia

Map of the official border of Turkey and Western Armenia (Arbitral Award 1920)	The occupied territories of the Republic of Western Armenia	The Genocide of the Armenians and the Reparations
	<p>Territory: 197,660 sq.km Capital city: Erzerum - Karin Population (1894): 6,900,000 Christian Armenians: 3,000,000 Armenian Muslims: 500,000 Kurds: 500,000 Turks: 1,000,000 Greeks: 1,200,000 Assyro-Chaldeans: 500,000 Others: 200,000 Date of occupation: 18 December 1917 (Armistice of Erzindjan) Number of Armenian victims of the genocide from 1894 to 1923: 1,800,000 Refugee: 800,000 Current population (2020) of Western Armenia: ~ 15,000,000 of inha. () Armenian Muslims and others: 5,000,000 Turks: 3,000,000 Kurds: 6,000,000 Others: 1,000,000 Armenian in exile (2020): ~ 12,000,000</p> <p>In 1912-1913 the Armenian Patriarchy of Constantinople presented an account of the churches and monasteries in Western Armenia and in the Ottoman Empire. More than 2300 were accounted for including the early unique Christian monuments of IV-V centuries. But most of them were looted, burned and destroyed during the genocide. At the end of 1920s, Turkey began changing the names and siles (toponymy) of certain locations in Western Armenia.</p> <p>In 1974 UNESCO stated that after 1923, out of 913 Armenian historical monuments left in Western Armenia, 464 have vanished completely, 252 are in ruins, and 197 are in need of complete repair.</p> <p>©western.armenia.eu – 04.02.2021</p>	<p>I - Damage (genocidal massacres) suffered from 1894 to 1896 in Western Armenia (including Cilicia). 300,000 dead. II - Damage (genocidal massacres) suffered from 1909 to 1910 in Western Armenia (including Cilicia). 30,000 dead III - Damage (genocidal massacres) suffered from 1914 to 1918 in Western Armenia (including Cilicia) and Eastern Armenia (Peace Conference). 1,500,000 dead IV - Damage (genocidal massacres) suffered from 1919 to 1923 in Western Armenia (including Cilicia). 100,000 dead. V - Damage (genocidal massacres) suffered from 1937 to 1938 in Dessim. VI - Damage suffered by the destruction of the Armenian cultural and historical heritage in Western Armenia (including Cilicia) and Nakhichevan. In total over the period 1894 to 1923 - 12.5 Trillion Euros (2015). Corresponding in part to Turkey's debt for Western Armenia VII - The State of Western Armenia (Armenia) and the issue of restitutions: 1) Restitutions belonging to private persons (legal entities and individuals). 2) Restitutions belonging to the national public and private domain. VIII - Armenians' gold: deposits in banks. IX - Insurance Policies. X - Damages caused by the occupation of lands and territories of the State of Western Armenia and the illegal exploitation of its resources from 1918 to the present day. XI - Illegal appropriation and exploitation of the public and private intellectual property of Armenians and Western Armenia.</p>

Արեւմտեան Հայաստան (Նախագահութիւն, Կառավարութիւն, Խորհրդարան)

Հռչակագիր, որը կը պարունակուի 2016 թուականի Մայիսի 09-ին կամ անկէ ետք ի պահ տրուած վավերացման բոլոր փաստաթղթերուն (Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Ազգային Սահմանադրութիւն):

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը կը յայտարարէ, որ պատրաստ է վավերացնել բոլոր Կոնվենցիաները եւ բոլոր Էական Լրացուցիչ Արձանագրութիւնները, այնուհանդերձ, կը յայտարարէ, որ ի վիճակի չէ երաշխաւորել հետեւեալ Կոնվենցիաները եւ Արձանագրութիւններու դրոյթներու կիրառումը Թուրքիայի Հանրապետութեան կողմէ գրաւած իր տարածքներուն մէջ, մինչեւ իր բռնազավթուած տարածքներու ազատագրումը եւ աներ հետեւանքներու լիակատար վերացումը:

1917 թ. Դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի հրամանագիրով ճանաչուեցաւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը, այնուհետեւ փաստացի 1920 թ. Հունուարի 19-ին (անուխտեսների սկիզբ, 1920 թ. Մարտի 1) եւ դէ յուրէ՛ դաշնակից եւ հարակից տերութիւններու Գերագոյն խորհուրդի կողմէ՝ 1920 թ. Մայիսի 11-ին: 1920 թ. Օգոստոսի 10-ին (Սեւրի պայմանագիր) ճանաչուեց Է Թուրքիայի կողմէ՝ պաշտօնական սահմանով, որը որոշուեց Է Նախագահ Վուստրոյ Ուիլսոնի արբիտրաժային որոշմամբ 1920 թ. Նոյեմբերի 22-ին:

Մինչեւ օկուպացիայի ազատելը եւ դրա հետեւանքներու ամբողջական վերացումը, ինչպէս նաեւ 1917 թուականի Դեկտեմբերի 18-էն իր տարածքին մէջ իրականացուած ցեղասպանութեան եւ անոր հատուցումներու կարգաւորումը, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը չի համագործակցիր Թուրքիայի Հանրապետութեան հետ՝ համապատասխան Կոնվենցիաներու եւ Արձանագրութիւններու շրջանակներուն:



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան

Արցախի Ան Զարտուղար Վիտալի Պալասանեանը յայտարարութիւն տառածած է



Արցախի Հանրապետութեան անվտանգութեան խորհուրդի քարտուղար Վիտալի Պալասանեանը յայտարարութիւն տարածեր է:

Յայտարարութեան մէջ մասնաւորապէս կ'ըստուի.


«Խօսակցութիւններ կայ այն մասին, թէ իբր Ստեփանակերտ քաղաքի Վերածնունդի հրապարակին՝ պետական շէնքերուն կը տեղադրուի ատրպէյճանական դրոշ, հարկ կը համարեմ կորուկ հերքել այդ լուրերը: Որոշ լրատուամիջոցներ եւ սոցիալական ցանցեր լուրեր կը տարածեն, թէ Արցախի պաշտպանութեան բանակը կը կազմալուծուի եւ ըստ այդ լուրերու տրամաբանութեան Արցախի սահմաններու պաշտպանութեան կազմակերպում չըլլար: Այս կապակցութեամբ կը ցանկանամ տեղեկացնել, որ Արցախի պետական մարմինները ներկայ պահին կզբաղուին պայմանագիրային հիմունքներով պրոֆէսիոնալ ստորաբաժանումներ կազմակերպելու հարցով՝ մեր սահմաններու պաշտպանութեան նպատակով:

Հասարակութեան որոշ շրջանակներու մէջ մտավախութիւն կայ, որ Արցախի որոշ շրջաններ կը բնակուին ատրպէյճանական ընտանիքներով: Խօսակցութիւններ կը տարածուի նաեւ այն մասին, թէ մասնաւորապէս Ստեփանակերտի առեւտրային կետերու մէջ ատրպէյճանցիները գնումներ կը կատարեն: Կը հաւաստիացնեմ, որ նման խօսակցութիւնները զուրկ են որեւէ հիմք:

Սիրելի՛ արցախցիներ, Արցախի իշխանութիւններու անունով կը հաւաստիացնեմ ձեզ, որ չնայած պատերազմական գործողութիւններու հետեւանքով մեզ հասցուած անդառնալի կորուստներու պետութիւնը մշտապէս հանձնառու է կատարելու բնակչութեան անվտանգութեան եւ բնականոն կենսագործունեութեան ապահովման իր պարտականութիւնները, ըստ այդ կոչ կ'ընեմ տուրք չի տալ կեղծ լուրերուն:

Արցախցիի արժանապատիւ կեանքի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու եւ ընդլայնելու ուղղութեամբ ամեն ինչ կը կատարուի»:

Արա Այուզեանը հանդիպեր է Արցախի ԱԳ Նախարար Դաւիթ Պապատեանի հետ



Փետրուարի 25-ին Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերու Նախարար Արա Այուզեանը հանդիպում ունեցաւ Արցախի Հանրապետութեան արտաքին գործերու Նախարար Դաւիթ Պապատեանի հետ:

Նախարարներ Այուզեանն ու Պապատեանը կարեւորեցին Հայաստանի եւ Արցախի քաղաքական գերատեսչութիւններու միջեւ համագործակցութեան աւելի ամրապնդումը եւ փոխշփումներու ու խորհրդակցութիւններու անցկացումը՝ առկայ օրակարգային հարցերու առաւել արդիւնավետ քննարկման եւ յետագայ քայլերու ուրուագիծման համար:

Հայաստանի եւ Արցախի արտաքին քաղաքական գերատեսչութիւններու ղեկավարներու հանդիպման առանցքն էին թուրք-ատրպէյճանական վերջին ագրեսիայի հետեւանքով Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառայած եւ անհապաղ հասցեագրում պահանջող հումանիտար խնդիրները, այդ թիւին հայ գերիներու շուտափոյթ հասցեագրումը: Արցախի մէջ սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման ուղղութեամբ ձեռնարկուող քայլերու համատեքստին հատկապէս շեշտուեց միջազգային մասնագիտական կառոյցներու՝ տեղւոյն ներգրաւելու անհրաժեշտութիւնը:

Արեւմտեան Հայաստանի Ազգային խորհուրդի հաղորդագրութիւնը



Հայաստանի Հանրապետութեան մէջ առկայ իրավիճակի վերաբերեալ

Շուշի քաղաքի մէջ թուրք-ատրպէյճանական զինվուած ուժերու ներթափանցումէն ետք , 33 Վարչապետի կողմէ 2020 թ. Նոյեմբերի 9-ին ստորագրուած հրադադարի պահէն, դեկլարատիվ հիմքերով ստեղծուեցաւ 17 քաղաքական կուսակցութիւններու ընդդիմութիւն, որոնք կը պահանջէին իշխանութիւններու հրաժարականը:

Ռուսաստանի զինուած ուժերու միջամտութիւնն Արցախի մէջ հայկական կողմին թոյլ տուաւ պահպանել զինադադարը, որը բազմիցս անտեսուած էր թուրք-ատրպէյճանական կողմէ:

Վարչապետի կողմէ, Չինուած ուժերու շտապի պետ, գեներալ Օնիկ Գասպարեանի տեղակալ՝ Գեներալ Տիրան Խաչատրեանին, «ԻՍԿԱԼԴԵՐ» հրթիռներու շահագործմանն առնչուող պատճառներով աշխատանքէն հեռացնելէ ետք, զինուած ուժերու գլխաւոր շտապը, մերժելով գեներալի պաշտօնանկութիւնը՝ ներկայացուց համախմբուած յայտարարութիւն՝ խնդրելով վարչապետին հրաժարական տալ:

33 պաշտպանութեան Նախարարութեան գլխաւոր շտապի այս յայտարարութիւնը 17 կուսակցութիւններու կողմէ ստեղծուած ընդդիմադիր շարժման հետ կապ չունի:

Այս ուղղութեամբ ցանկացած չի մտածուած քայլ կը հանգեցնէ խառնաշփոթի, ըլլայ քաղաքական սխալ կամ ոչ օբյեկտիվ գործողութիւն, որը կը շարունակուի քաղաքական իշխանութիւններու մակարդակով:

Գլխաւոր շտապը կը ներկայանայ ոչ որպէս ներկայ իրավիճակի քաղաքական այլ ընտրանք, այլ որպէս ժամանակաւոր միջոց այն պարագային, երբ Հայաստանի Հանրապետութեան ներքին անվտանգութեան եւ տարածքային ամբողջականութեան պաշտպանութեան վրայ կազդէն անկայուն քաղաքական գործոններ, ներքին կամ արտաքին ուժեր:

Արեւմտեան Հայաստանի ազգային խորհուրդը երախտապարտ կ'ըլլայ, որ ստեղծուած իրավիճակը հանգուցալուծուի Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան հիմքի վրայ. զինուած ուժերու գործունեութեան հետ կապուած խնդիրները չի լուծուին հանրային հրապարակին՝ հաշուի առնելով, որ գաղտնի պատերազմը դեռ կը շարունակուի:

Կրթութիւն եւ գիտութիւն - Սպորտ

Արեւմտեան Հայաստանի եւ Արցախի ֆուտպոլային խումբերը կը մասնակցին CONIFA Euro 2021-ին



Ինչպէս կը յայտնէ CONIFA-ի կայքը, Արցախի (Լեռնային Ղարաբաղ) եւ Արեւմտեան Հայաստանի ֆուտպոլային խումբերը կը մասնակցին CONIFA Euro 2021-ին: CONIFA Euro 2021-ը տեղի կունենայ Յունիսի 9-19-ը Ֆրանսիայի Լիցցա քաղաքին մէջ: Հիշեցնենք, որ 2019-ի Յունիսին Արցախը հիւրընկալել էր առաջնութիւնը:

Տեղի ունեցեր է CONIFA EURO 2021 խմբային վիճակահանութիւնը



Փետրուարի 20-ին տեղի ունեցաւ CONIFA-2021 Եւրոպայի առաջնութեան վիճակահանութիւնը: Արեւմտեան Հայաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականի մրցակիցները Դ խումբը կը լլան Չամերիան եւ Պադանիան: Արցախի ֆուտպոլի հաւաքականը կը մրցի Հարաւային Օստրիայի եւ Քորնուոլ թիմերու հետ: Ա խումբին կը մրցին Նիցը, Հիւսիսային Կիպրոսը եւ Սարդինիան: Բ խումբը կը մրցին Աբխազիան, Սապաի եւ Սեկեյան: CONIFA-2021 Եւրոպայի առաջնութիւնը կանցկացուի Ֆրանսիայի Լիցցա քաղաքին մէջ Յունիսի 9-19-ը: Հաջողութիւն մաղթենք մեր թիմերուն:



Յեղինակ-կատարող Վիգեն Հովսեփեանը իւրովի մեկնաբաներ է Կոմիտասի «Չուլոն»



Յեղինակ-կատարող Վիգեն Հովսեփեանը, որը նորովի կը մատուցէ հայկական ժողովրդական երգերը եւ պարբերաբար կանդորադառնայ իսպանական սիրուած ստեղծագործութիւններու, հետաքրքիր մեկնաբանութեամբ ներկայացուցեր է Կոմիտասի «Չուլոն» երգը: «Արմենիերես»-ի հաղորդմամբ՝ երգի հոլովակն արդէն հասանելի է համացանցին : «Վերջապէս «Չուլոն» եկաւ: Շնորհակալ եմ իմ տաղանդաշատ ընկերներուն՝ Արթուր Արմենի մնացականեանին, Նորայր Գափոտեանին, Հակոբ Օրդակեանին, Գուրգեն Էբեջեանին, որոնք ջանք չի խնայեցին իրենց մեծագոյն ներդրումն ունենալու երգի ձայնագրման գործին, որու արդիւնքը դուք կարող եք լսել երգի ամեն հատուածներու մէջ»,-«Ֆէյսբուքի» իր պաշտօնական էջին գրած է Վիգեն Հովսեփեանը՝ կրկին շնորհակալութիւն յայտնելով երգի եւ հոլովակի ստեղծելու գործին մեծ ներդրում ունեցած բոլոր աջակիցներուն: Երածիշտը խօստովանած է, որ «Չուլոն» մինչեւ այսօր իր համար ամենաներկար սպասուած աշխատանքներէն է, որու վրայ աշխատած են մէկ անելի քան մէկ տարի: «Բարի դիտում, յոյս ունիմ կը հաւանեմ»,- եզրափակել է Յովսեփեանը:

Լոյս տեսեր է ՀՅՈՒ Հիմնադրամի «Վարձք» ամսագրի հերթական համարը



Լոյս տեսեր է «Վարձք» հանդէսի 14-րդ համարը, որտեղ տեղ գտած են Սամուել Կարապետեանի «Պատմական քաղաք Անի» գիրքի գրախօսութիւն» , «Վիմագրական մանրապատմներ», «Ստոյգ թուագրուած ամենահին խաչքարը՝ 866 թ.», Ռաֆֆի Քորթոշեանի «Ի՞նչ կը թաքցնեն Արեւմտեան Հայաստանի պատմական յուշարձաններու թուրքական ցուցանակները», «Խաչեն-Դորբատլիի դամբարանի արաբերէն արձանագրութիւնը», «Հանուն Կիլիկիայի Հայկական թագաւորութեան նահատակուած Սըր Ֆիլիպը», Արթուր Թամրազեանի «Հուշեր» (Ներկայի Ատրպեյճանի Իսմայիլլիի շրջանին գտնուող Ագայիշեն գիւղի մասին), Սամուել Այուզեանի «Փիրումաշենի եկեղեցին եւ անոր ճարտարապետաշինարարական վերլուծութիւնը», Յեթում քին. Թարվերդեանի «Հայերու եկեղեցաշինարարական գործունեութիւնը Ռումինիայի մէջ» յոդուածները:



Երկուշաբթի 01 Մարտ 2021- Թիւ 29

Հրատարակչութիւն՝

Արեւմտեան Հայաստանի
Հաղորդակցութեան Նախարարութիւն

Հետադարձ կապ
contact@western-armenia.eu

Ծանոթացե՛ք Արեւմտեան Հայաստանը

WESTERN ARMENIA FOUNDATION

CNA

RIB : 30004 00066 00010033378 67

IBAN : FR76 3000 4000 6600 0100 3337 867 - BIC : BNPAFRPPMAS